**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2**

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԳԿ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 01.08.2017թ. ժամը 10-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Ս.Պետրոսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Հովհաննիսյանը, Վ.Գսպոյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

**<u>Օրակարգ</u>**

***<u>Հայտերի բացման և գնահատման մասին</u>***

**1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԳԿ-17/3» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ (ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Փարպի)**
2. **«Երվադա» ՍՊԸ (ք. Երևան, Արին-Բերդի 3/4)**
3. **«Սենդա» ՍՊԸ (ք. Երևան, Հր. Քոչարի 8/16)**
4. **«ՀԱՏՄ» ՍՊԸ (Շիրակի մարզ, Մայիսյանի արդ. հանգույց)**

**2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

3.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ **«ՀԱՏՄ» ՍՊԸ**-ի հայտի: **«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտի **Հավելված 10-ում**՝ տուժանքի մասին համաձայնագրում, ամսաթիվը լրացված չէ :

## 4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

| Չ/Հ | Անվանում | Քանակ | Նախահաշվային գին | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | **«Երվադա» ՍՊԸ** | **«Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ** | **«Սենդա» ՍՊԸ** | **«ՀԱՏՄ» ՍՊԸ** |
| 1 | չիրկիզվող պահարաններ | 24 | 1440000 | 1118400 | | 2300000 | 3600000 |
| 2 | գրապահարաններ | 9 | 342000 | | 284250 | 390000 | 675000 |

## 5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**Հանձնաժողովը որոշեց՝**

1.1 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝

1-ին չափաբաժնի համար **«Երվադա» ՍՊԸ** –ին,
2-րդ չափաբաժնի համար **«Բարսեղյան Եղբայրներ»** **ՍՊԸ**:

Ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցներ չկան:

2. Մերժել **«ՀԱՏՄ» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

3. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 15.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

**Հանձնաժողովի քարտուղարին՝**

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետերի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝  կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ ____________ Ս.Պետրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Լ.Հովհաննիսյան

____________ Լ.Գսպոյան

____________ Մ.Անտոնյան

____________ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Մ.Մուրադյան